Հավելված N 2
2026 թվականի հունվարի 23-ին կնքված
1032-11002/2026-ԱՀՄՏ24 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 24. Երևան, Կոտայք (մասնագիտացված) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2026 – 31.12.2026թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026-30.06.2026թթ. |
| Ներկայացման օր | 03.07.2026 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2026.08.06
10:34:00 AMT

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար սահմանված են հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակացության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում,
- կենցաղային սպասարկման աջակցության տրամադրում,

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակացության տրամադրման** շրջանակներում սոցիալական աշխատողը տունայցերի միջոցով աջակցություն է տրամադրել Երևան և Աբովյան համայնքների 46 շահառուի: Կարիքների գնահատման և վերագնահատման արդյունքում կազմվել կամ փոփոխվել են 18 շահառուների անհատական ծրագրերը, որոնց հիման վրա էլ տրամադրվել են համապատասխան ծառայությունները:
  Սոցիալական աշխատողի կողմից պարբերական աշխատանքներ են իրականացվել շահառուների սոցիալական կարողությունների, ինքնուրույն կենցաղավարման հմտությունների զարգացման ուղղությամբ, արդյունքում 29 շահառուի մոտ առաջընթաց է գրանցվել բնակարանի մաքրության պահպանման գործում, 16 -ի մոտ ճաշի պատրաստման գործում, 27 շահառու սոցիալական աշխատողի խորհրդատվության և իր իրավունքների մասին իրազեկման արդյունքում սկսել է զբաղվել իր հիմնախնդիրների լուծմամբ, հաճախակի դուրս գալ տանից, շփվել մարդկանց հետ, ինքնուրույն կատարել իր գնումները:
  Սոցիալական աշխատողի կողմից պարբերական աշխատանքներ են իրականացվել շահառուների սոցիալական կարողությունների, ինքնուրույն կենցաղավարման հմտությունների զարգացման ուղղությամբ, արդյունքում 8 շահառուի մոտ առաջընթաց է գրանցվել բնակարանի մաքրության պահպանման գործում, 7-ի մոտ ճաշի պատրաստման գործում, 9 շահառու սոցիալական աշխատողի խորհրդատվության և իր իրավունքների մասին իրազեկման արդյունքում սկսել է զբաղվել իր հիմնախնդիրների լուծմամբ, հաճախակի դուրս գալ տանից, շփվել մարդկանց հետ, ինքնուրույն կատարել իր գնումները: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 1 դեպքի վարում (1 շահառու՝ «Պլանտա Սանա» պողիատրիկ կենտրոնից ստացել է լոգարանի աթոռ, ձեռնափայտ և 2 զույգ օրթոպեդիկ կոշիկ): Եռամսյակի ընթացքում ՄԾՏԿ-ից ձեռք է բերվել թվով 3 շահառուների համար միավորի տեղեկանք: Թվով 3 շահառուի համար կատարվել է գնումների և վճարումների իրականացում, թվով 1 շահառուի համար համատիրությունից ձեռք է բերվել տեղեկանք և ներկայացվել թաղապետարան շահառուների համար սննդի և հիգիենիկ փաթեթներ ստանալու նպատակով, թվով 1 շահառուի համար ներկայացվել է դիմում՝ կենսաթոշակը և նպաստը անկանխիկ եղանակով ստանալաու նպատաով: Թվով 1 շահառու ուղեկցվել է տարբեր հաստատություններ՝ բանկ, բժշկական հաստատություն և այլն: Թվով 1 շահառուի սոցիալական աշխատողը գրանցել է Armed հարթակում:

  Անհրաժեշտութուից և շահառուի ցանկությունից ելնելով հոգեբանական խորհրդատվություն է տրամադրել 13 շահառուի, 11-ի հետ իրականացվել է անհատկան հոգեբանական աշխատանք (շարունակական):

Խորհրդատվական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացվում է շահառուների իրազեկում իրենց իրավունքների մասին՝ յուրաքանչյուրին իրեն հասանելի տարբերակով:
Ժամանցի կազմակերպում. շահառուների բացահայտված հետաքրքրությունների հիման վրա վերջիններիս ներգրավել են համայնքային մշակութային միջոցառումներին, ցանկության դեպքում կազմակերպվել է նրանց մասնակցությունը ցերերեկային կենտրոններում գործող խմբակներին, էքսկուրսիաներին:
Հաշվետու ժամանակահատվածում 5 շահառու մասնակցել է ցերեկային կենտրոնում գործող խմբակներին և դասընթացներին, ինչպես նաև կենտրոնում կազմակերպված հետևյալ 18 միջոցառումներին և էքսկուրսիաներին՝

- Զատկի տոնը Նոնենիում:
- Ժամանց Պոնչիկանոցում շահառուների հետ:
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հանդիպումը շահառուների հետ «Նոնենի» սոցիալական տանը:
- Միջոցառում նվիրված մայիսի 9-ին:
- Մշակութային այց «Լուսիկ Ագուլեցու» տուն-թանգարան:
- Միջոցառում նվիրված երեխաների միջազգային օրվան:
- Էքսկուրսիա Ստեփանավան՝ Դենդրոպարկ, Սպիտակի «Սուրբ Հարություն» եկեղեցի, Ստեփանավանի սոճուտների անտառ:

1 շահառու պարբերաբար մասնակցել է դասական համերգների:

- Բժշկական օգնության տրամադրման շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում 46 շահառու բժշկական աջակցություն է ստացել, որը հիմնականում ներառել է զարկերակային ճնշման չափում, գլյուկոմետրիա, դեղորայքի մշտադիտարկում և ստացման հարցում աջակցություն, միջմկանային ներարկումներ, առկա առողջապահական խնդիրների քննարկում և խորհրդատվություն:
  Դեղորայքի մշտադիտարկումը ներառել է դեղորայքի պիտանելիության ժամկետների ստուգում, հոգեմետ դեղորայքի ընդունման ժամկետների վերահսկում, ինչպես նաև դեղորայքի վերաբերյալ խորհրդատվությունը: Հաշվետու ժամանակահատվածում բուժքրույրերի կողմից իրականացվել է հոգեբույժի կողմից նշանակված դեղորայքի ճիշտ ժամանակացույցով ընդունման մշտադիտարկում 32 շահառուի համար, 4 շահառուի ուղեկցել են բժշկական հաստատություններ 26 շահառուների համար դեղորայք է ստացել տարբեր բժշկական հաստատություններից այդ թվում Ավան ՀԱԿ-ի դողատնից 4 շահառուի համար, 5 շահառուի համար դեղորայք է ձեռք բերվել դեղատնից: 3 շահառուի համար կազմակերպվել է տեղամասային պոլիկլինիկայի թերապևտի խորհրդատվություն:
  Թվով 1 շահառուի համար կատարվել է վերքի մշակում, վիրակապի փոխում (շարունակական), թվով 7 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 5 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական): Թվով 4 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ: 1 շահառուի համար ձեռք է բերվել ուղեգիր հիվանդանոցում հետազոտվելու նպատակով, 6 շահառուի համար իրականացվել է հետազոտությունների կազմակերպում, 3 շահառուների համար՝ անալիզների հանձնում, 2 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է բժշկական քարտից քաղվածք:
  Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է հոգեբույժի խորհրդատվություն շահառուներին, տնայցերի միջոցով անհրաժեշտ խորհրդատվություն է տրամադրել 3 շահառուի:

- Կենցաղային սպասարկման աջակցման շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 46 շահառուի: Կենտրոնից տաք կերակուր է տրամադրվել 3 շահառուի, սոցիալական սպասարկողների կողմից կերակրի պատրաստման հարցերում աջակցություն է տրամադրվել 14 շահառուի, անձնական հիգիենայի պահպանման (մարմնի մասնակի լվացման, լոգանքի, ինքնախնամքի և այլն) հարցերում աջակցություն են ստացել 16

շահառու, 16 շահառուի համար իրականացվել է բնակարանի մաքրման աշխատանքներ, 22 շահառուի համար կատարվել է գնումներ:

Տրամադրվող ծառայությունների արդյունքում շահառուներից շատերը սկսել են ընդլայնել իրենց շփումների շրջանակը, վերականգնել իրենց ինքնավստահությունը, ավելի շատ ներգրավվել տնային մաքրության և ինքնախնամքի կազմակերպման գործընթացում, տեղեկատվություն ձեռքբերել՝ տարբեր կառույցներից/կազմակերպություններից օգտվելու հնարավորությունից:

Նաև բազմամասնագիտական թիմի կողմից իրականացվում են աշխատանքներ՝ նպաստելով վերջիններիս ֆիզիկական, սոցիալական եւ հոգեբանական բարեկեցության բարելավմանը, ֆունկցիոնալության բարձրացմանը, ինչպես նաև համայնքային կյանքի ինտեգրմանը՝ նպաստելով վերջիններիս ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական բարեկեցության բարելավմանը, այն է՝ նրանց մասնակից դարձնելով ցերեկային կենտրոնի միջոցառումներին:

**Հաջողված օրինակ.** 3 շահառուի համար պարբերաբար իրականացվում են կարողությունների ու հմտությունների զարգացման ուղղված աշխատանքներ: Շահառուների ներուժն օգտագործելու, շփվելու և ճաշելու նպատակով վերջիններս ընդգրկված են ՑԿ դասընթացներին, ինչպես նաև ակտիվ մասնակցում են միջոցառումներին և էքսկուրսիաներին:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում,
- կենցաղային սպասարկման աջակցության տրամադրում,

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում աշխատակազմի կարողությունների ու գիտելիքների շարունակական զարգացումն ապահովելու համար.

- ✓ Հոգեբույժի և սուպերվիզորի մասնակցությամբ բոլոր համայնքներում պարբերաբար իրականացվել են բարդ դեպքերի քննարկումներ:
- ✓ Համապատասխան տարածքները սպասարկող սոցիալական աշխատողները մասնակցել են Երևանի բոլոր վարչական տարածքներում ՄՍԾՏԿ-ների խորհրդատվական նիստերին եւ եռամսյակային ֆորումներին:
- ✓ «Նոնենի» համայնքային կենտրոնի բազմամասնագիտական թիմը մասնակցել են ՓԻՆ-ի «Անձի Ֆունկցիոնալության գնահատման համակարգը» թեմայով առցանց հադիպմանը:
- ✓ «Նոնենի» համայնքային կենտրոնի բազմամասնագիտական թիմը մասնակցել են «SPHERE ընթացակարգեր, սեռական շահագործման, բռնության, հետապնդման կանխարգելում և

վարքագծի կանոնագիրք» դասընթացին, որը կազմակերպվել էր «Էյ Էս Բի» կազմակերպության կողմից:

- ✓ «Նռնենի» թիմ լիդերը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում մասնակցել է «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմնադրամի և Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «ՖՄԴ հանրայնացում և զարգացում» ծրագրի շրջանակում մշակված՝ ՖՄԴ հիմքով համապարփակ գնահատման և անհատական աջակցության պլանավորման գործիքակազմի ներկայացման և քննարկման նպատակով կազմակերպվող հանդիպմանը:
- ✓ «Նռնենի» համայնքային կենտրոնի բազմամասնագիտական թիմը առցանց մասնակցել են «հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարիքները» թեմայով դասընթացին:
- ✓ Խնամքի պատասխանատուն և բուժքույրերը Ամերիկյան համալսարանում մասնակցել են «Նոր դարաշրջանի բուժքույրական գործ» թեմայով կոնֆերանսին:
- ✓ «Նռնենի» թիմ լիդերը և հոգեբանը Ակնաշենի փոքր տանը մասնակցել են «Արտակարգ իրավիճակներում ՀՈՒԱ ներառական արձագանքման պլանների մշակում և փորձարկում» դասընթացին:
- ✓ Տնային սպասարկման կենտրոնի աշխատակիցները մասնակցել են հուզական այրման (burnout) կանխարգելմանն ուղղված վերապատրաստմանը, որը կազմակերպվել է կազմակերպության կենտրոնական գրասենյակում (ք. Երևան, Գարեգին Նժդեհի փողոց 42 հասցե): Վերապատրաստման շրջանակներում ներկայացվել են մասնագիտական սթրեսի կառավարման, հոգեկան բարեկեցության պահպանման և աշխատանքային արդյունավետության բարձրացման մեթոդներ:
- ✓ Տնային սպասարկման կենտրոնի աշխատակիցները մասնակցել են PSEAH և SphereStandards թեմաներով հանդիպմանը, որը տեղի է ունեցել ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան, Նազարբեկյան թաղամաս (Հյուսիս-Արևմտյան Գ-3 թաղամաս, 25/5 հասցե): Հանդիպման ընթացքում քննարկվել են շահառուների պաշտպանության, էթիկական վարքագծի և ծառայությունների որակի ապահովման հետ կապված հարցեր:
- ✓ «Փախստականների եւ ընդունող համայնքների հզորացում աշխատաշուկայում, մրցունակության բարձրացում եւ ակտիվ աջակցություն կայուն ինտեգրման համար» ծրագրի շրջանակում. տնային սպասարկման աշխատակիցները մասնակցել են. մասնակցել են. SPHERE ընթացակարգեր, սեռական շահագործման, բռնության, հետապնդման կանխարգելում եւ վարքագծի կանոնագիրք դասընթացին:
- ✓ «ՔՈՓՐՈԴԱՔՇՆ» հանդիպում, որի ընթացքում քննարկվել են ՀԱԽՈւ անձանց վերաբերյալ հիմնախնդիրները, գործող «Հուզական թեժ գիծ» ծրագրի մանրամասները, մասնակցել են Նոր Նորք և Ավան սոցիալական աշխատողները

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 46/44 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 30 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 23 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 13 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 22 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 21 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). Նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը | Ա – 3<br>Բ – 41 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 46 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 46 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 46 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 5 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 24 |
| 7. | այլ ծառայություն (նշել) հոգեբանական խորհրդատվություն | 12 |

Կազմակերպության ղեկավար ___*Երվանդ Մխիթարյան*___ 04.03.2026թ
(ստորագրություն, անուն,ազգանուն)